№ 108 Յունիսի 16 (28) 1881 Յունիսի 16 (28) № 108

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգացիք գիմում են ազգակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքաց Հայաստանի հողերը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԸ

Քանի մի ժամանակ է արդէն մենք լսում ենք, որ Թիւրքաց Հայաստանի հողերը, որոնք գտնվում են Թիւրքերի կամ քիւրդերի ձեռքում, շատ էժան գնով ծախվում են այժմ։ Մենք արդէն մի անգամ այդ մասին խօսելով, ասեցինք որ հայ երկրագործ ազգաբնակութեան համար շատ վտանգաւոր կը լինէր եթէ հարուստ հայերը, օգուտ քաղելով Թիւրքաց Հայաստանի հողերի էժանութիւնից, առնէին այդ հողերը։ Հարուստ հայը, լինի նա Թիւրքիացի թէ ռուսաստանցի, տիրապետելով Հայաստանի հողերի վրա, գուցէ աւելի կը հարստահարէր հայ բնիկ գիւղացուն, քան թէ նոյն իսկ քիւրդ և Թիւրք բէկերը։

Ուրիշ կողմից լուրեր են տարածված իբր թէ եւրոպական մի քանի երկիրներ, օրինակ Գերմանիան, դիւաւորութիւն ունեն ձեռք բերել Հայաստանի հողերը և գաղթեցնել այդտեղ իրանց անհող երկրագործ ժողովրդի կոլոնիաները։

Այդ վտանգին առաջն առնելու համար, որ սպառնում է Թիւրքաց Հայաստանի տնտեսական դրութեանը, մեր կարծիքով Կ. Պոլսի հայերը պէտք է վաղօրոք հոգան, որպէս զի Հայաստանի հողերը չընկնեն կամ օտարների, կամ նոյն իսկ հարուստ հայ հարստահարողների ձեռքը։

Եթէ կարելի է հիմնել Կ. Պոլսի մէջ մի բարեգործական, կամ մի ուսումնարանական ընկերութիւն, որի դրամագլխով դպրոցներ են հիմնվում Հայաստանի մէջ,—ի՞նչի չէր կարելի հիմնել մի տնտեսական ընկերութիւն, որ „Միացեալ ընկերութեան“ պէս գումարներ հաւաքելով, հեռագիտէ հողեր գնէր Թիւրքաց Հայաստանում և յանձնէր այդ գնած հողերը հայ երկրագործ ժողովրդին։

Մենք դարձեալ յիշեցնում ենք այդտեղ այն օրինակը, որ քանի մի անգամ բերեցինք „Մշակի“ մէջ, թէ ինչպէս Եւրոպայի մի քանի տեղերում անհող բանւոր կամ երկրագործ դասակարգը հողի և անշարժ կայքերի սեփականատէր է դառնում շնորհով բարեգործական-տնտեսական ընկերութիւնների կամ անհատ կապիտալիստների։

Մի գեղին է առնում մի ընկերութիւն, կամ մի հարուստ ֆաբրիկանտ, բաժանում է այդ գեղինը կտորների վրա, շինում է իւրաքանչիւր կտորի վրա փոքրիկ, բանւոր ընտանիքի համար յարմարեցրած մի տուն, գցում է տան առջև մի պարտէզ և վարձով է տալիս այդ ամբողջ գեղինը, իր տնով և պարտէզով մի բանւոր ընտանիքին, այն պայմանով, որ տարեկան վարձի մի մաս հաշվվի, որպէս կապիտալի հանգչում, այնպէս որ մի յայտնի ժամանակամիջոցից, տաս, տասն և հինգ, կամ քսան տարուց յետոյ, տիրոջը միմիայն տարեկան յայտնի վարձ վճարելով՝ բանւորը դառնում է հողի և տան սեփականատէր։

Նոյն պրինցիպը կարելի էր գործ դնել և այն տնտեսական ընկերութեան վերաբերութեամբ, որ մենք առաջարկում ենք Կ. Պոլսեցիներին հիմնել Հայաստանի ծախվող հողերը ձեռք բերելու և հայ երկրագործ ժողովրդին բաժանելու համար։

Տնտեսական ընկերութիւնը, „Միացեալ“ և „Սովելոց“ ընկերութիւնների նման դիցուք կը հաւաքի նուիրատուութեամբ մի յայտնի գումար։ Այդ գումարով նա կառնի հողեր Հայաստանում և կը տայ արէնդայով (կապալով) այդ հողերը հայ երկրագործ ժողովրդին (քրիստոնեայ թէ մահմեդական անխտիր), այն պայմանով միայն, որ արէնդայի վարձի մի մաս, որ կը տրվի իւրաքանչիւր տարի ընկերութեանը, հանգչի որքան կարելի է կարճ ժամանակամիջոցից յետոյ և մայր-պարտքը, այնպէս որ միմիայն տարեկան թեթև վարձ վճարելով ընկերութեանը՝ գիւղացին յայտնի ժամանակամիջոցից յետոյ կը դառնայ հողի լիակատար սեփականատէր։ Մինի ստացված արէնդական վճարով, ընկերութիւնը նորից կը գնի մի այլ գեղին և կը ծախի նրան մի ուրիշ գիւղացու կամ գիւղական ընկերութեան վրա և այլն այդպէս շարունակաբար....

Առաջարկում ենք Կ. Պոլսի հայ երիտասարդութեանը կշռել մեր պրոյեկտը, մշակել ընկերութեան կանոնագրութիւնը և հիմնել այդ ամենակարևոր տնտեսական ընկերութիւնը։ Դրանով բացի հայերին նրանցից խլած մայրենի հողերը դարձնելուց, կը հաստատվի համերաշխութեան և սիրոյ կապ հայաստանցի քրիստոնեայ և մահմեդական աշխատասէր, երկրագործ, նստակեաց ազգաբնակութեան մէջ։

Իսկ այդ ընկերութեան նուիրատուութիւնների մէջ նոյնքան և գուցէ աւելի եռանդով կը մասնակցեն ամբողջ աշխարհի հայերը, ինչպէս մասնակցեցին „Միացեալ“ և „Սովելոց“ ընկերութիւնների մէջ։

Նոյն իսկ այժմեան սովելոց մասնաժողովը մշակելով այդ նոր պրոգրամը, կարող էր կերպարանափոխվել այդ „Տնտեսական“ ընկերութեան մէջ։

Գ. Ա.

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ԺԳ.

Հետևեալ օրվայ առաւօտեան պահուն, Ասլամազ-Կուլի խանը, մի խումբ թիկնապահ ձիաւորներով, բերդի ներսի կողմից, վազվզում էր պարիսպների մօտով, քննում էր աշտարակները, նայում էր նշանաւոր դիրքերին, կարգադրութիւններ էր անում, պատուէրներ ու հրամաններ էր տալիս։

Բերդը բոլորած էր ամուր, բարձր շրջապարսպով. բացի դրանից, նա ունէր բնական ամրութիւններ ևս. մի կողմում խոր անդունդի նման ձգվում էր մի վիհ, որի միջով անցնում էր Հալիձորի գետը. միւս կողմում, բարձրանում էին սրածայր լեռներ։ Շրջապարիսպը իւրաքանչիւր քսան քայլ հեռաւորութեան վրա ունէր աշտարակներ, որոնց վերևի մասը վերջանում էր ժանիքների նման ատամնաւոր բարձրութիւններով։ Այդ բարձրութիւնների ետևում շարված էին զինուորներ, և հրացանների ծայրերը դնելով վերնապարապի մէջ բացված ծակերում, սպասում էին։ Նրանք թագնված էին աշտարակների ժանիքների ետևում, որ ծառայում էին նրանց որպէս պատսպարան։

Մի քանի նշանաւոր դիրքերի վրա դրած էին փոքրիկ թնդանօթներ, որոնց զամբուրակներ են կոչում, և հարկաւորած ժամանակ, ուղտերի մէջքի վրա կապելով, շատ հեշտութեամբ կարելի էր մի տեղից միւս տեղ փոխադրել։ Բերդի շուրջը պատող ահագին խրամը լցրած էր ջրով։ Բոլոր կամուրջները քանդված էին, պահվում էր մէկը միայն հաղորդակցութիւնը դրսի հետ առ ժամանակ պահպանելու համար, մինչև թշնամու մօտենալը։

—Ես այդ անհաւատներին ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում պաշարել իմ բերդը, ասաց խանը կատաղութեամբ, և դիտակը դնելով աչքերին, սկսեց վերնաբերդի բարձրութիւնից նայել, արդեօք երևում էր թշնամին, թէ ոչ։ Ոչինչ չէր երևում։

—Եթէ ծովերի աւազները զօրքեր դառնան, ձեր զօրութեան առջև կը փշրվեն և փոշու նման օդի մէջ կը ցնդին, խան, պատասխանեցին շողքորդները, որ շրջապատել էին նրան։

Խանը միջահասակ մարդ էր. փառաւոր սև մօրուքը հասել էր մինչև գօտին։ Այսօր ոտքից ցգլուխ զինված էր նա, իր հպատակներին օրինակ տալու համար։ Նա ցած իջաւ վերնաբերդից, կրկին նստեց իր ձին և դիմեց դէպի մի այլ դիրք հետազօտելու համար։ Թիկնապահ ձիաւորների բազմութիւնը հետևեց նրան։

Բերդի մէջ տիրում էր սարսափելի խռովութիւն և իրարանցում։ Դեռ չը լուսացած, բոլորը ոտքի վրա էին։ Ցղամարդիկը զինվում էին պաշտպանվելու համար. կնիկները տների իրեղէնները թագցնում էին յափշտակութիւնից զերծ պահելու համար։ Ամեն կողմից լսելի էին լինում յուսահատական ձայներ, խառն աղաղակների և արտասուքի հետ։

Վաղորդեան ժամն էր թէև արևը դեռ չէր ծագել, բայց այնքան լոյս էր, որ կարելի էր առարկաները փոքր հեռաւորութեան վրա որոշել։ Շրջակայ լեռները ծածկված էին թանձր մառախուղով։ Հեռուից ոչինչ չէր տեսնվում։

Այդ միջոցին Դաւիթ բէկի զօրքերը, զանազան գունդերի բաժանված, դժուարին, զարտուղի ճանապարհներով դիմում էին դէպի բերդը։ Առաջապահների մի խումբ, Բայինդուր իշխանի հրամանատարութեան ներքոյ, բաւական մօտեցել էր բերդին։ Մի այլ խումբ, Մխիթար սպարապետի հրամանի ներքոյ, մօտենում էր բերդին ուրիշ ճանապարհով։ Ինքը Դաւիթ բէկը թորոս իշխանի հետ պահել էին իրանց ձեռքի տակ ընտիր ուժը, որ բաղկացած էր երկու հազար հետևակներից և երեք հարիւր ձիաւորներից։

Մինչև բերդը հասնելը, զանազան կէտերի վրա, թուրքերը ամրացրել էին մի քանի դիրքեր, որ թոյլ չը տան թշնամուն մօտենալ և պաշարել բերդը։

Այդ դիրքերից մէկը գտնվում էր դէպի բերդը տանող նեղ ճանապարհի վրա և բոլորից ամուրն էր։ Երկու լայնանիստ բլուրներ, երկու հսկայական սիւների նման, բռնել էին նեղ ճանապարհի աջ և ձախ կողմերը, թողնելով իրանց մէջ տեղում մի նեղ և երկայն կիրճ։ Այդ կիրճից պէտք է անցնէր բէկի զօրքը, բերդին մօտենալու համար։

Բայինդուր իշխանը, առաջապահ խումբերից մէկի հրամանատարը, դիմում էր ուղիղ դէպի կիրճը։ Նրա հետ էր հալիձորցի մէլիք-Փարսադանը։ Երբ մօտեցան, նա դարձաւ դէպի մէլիքը, ասելով.

—Լսիր, մէլիք, այսօր պարսից թագաւորի «բաթման զլիճը» այդ անպիտանների գլխին մի խաղ պիտի խաղայ։

—Ի՞նչ խաղ, հարցրեց մէլիքը ժպտալով։

—Մի այնպիսի խաղ, որ իրանց կեանքում տեսած չը լինեն, պատասխանեց պարսից թագաւորի «բաթման զլիճը» իր սովորական եղանակով։—Անպիտանները վատ տեղ են բռնել, եթէ այդ նեղ կիրճի մէջ մտնելու լինին, մեզ կը խեղդեն, իսկ եթէ նրանց գտնված բարձրութեան վրա գնանք, վերևից մեզ լաւ կը քօթկեն։

—Պէտք է մի հնար գործ դնել, որ նրանք բլուրների գագաթից ցած իջնէին։ Ներքևում աւելի հեշտ կը լինէր նրանց ջարդել։

—Ի՞նչ հնարքով կարելի է ցած բերել, հարցրեց մէլիքը։

—Ահա ինչ հնարքով. դրանք հաւի խելք ունեն, «քիշ» անես, կը փախչեն, «ջու-ջու» անես, կը մօտենան։ Հարկաւոր է սկզբում մի թեթև յարձակում գործել. երբ նրանք կընդդիմանան, պէտք է կամաց-կամաց խոյս տալ և ապա փախուստ ձևացնել։ Այդ ժամանակ նրանք մեր ետևից ընկնելու համար կիջնեն իրանց բարձրութիւններից, և տափարակի վրա մենք նրանց «հոգեցը» կը կարդանք...

—Փորձենք.... ասաց մէլիքը, և Բայինդուր իշխանի հետ իրանց ձեռքի տակ եղած խումբը երկու մաս բաժանելով, երկու կողմից սկսեցին դիմել դէպի կիրճի աջ և ձախ կողմերում գտնված բարձրութիւնները, որ ծածկված էին թուրք հրացանակիրներով։

Զուռնայի և դաւուլի ձայնը տուեց յարձակման առաջին նշանը։ Զը նայելով, որ հայ զինուորներին հրամայված էր ձեի համար միայն յարձակում գործել, բայց այդ թուրքի արեան ծարաւի քաջերը, «կեցցէ Դաւիթ բէկ» գոռալով, առաջ մղվեցան, կամենում էին սար ու ձոր ոտքի տակ տալ և իրանց վրէժը առնել։ Նրանք զինված էին հրացաններով, նիզակներով և խէնջարներով։ Բոլորի թիւը հազար հոգի էր, հինգ հարիւր Բայինդուր իշխանի հրամանի ներքոյ, հինգ հարիւր ևս մէլիք Փարսադանի հրամանի ներքոյ։ Բայինդուր իշխանը, իր խումբի առաջն անցած, դիմում էր դէպի կիրճի աջ կողմի բարձրութիւնը, իսկ մէլիք Փարսադանը ձախ կողմի բարձրութիւնը։ Բլուրների գառիվերը սաստիկ ուղղաձիգ էր. հայոց զինուորները երբեմն կատուի նման ճանկռտելով ապառաժները, երբեմն օձի նման սողալով մացառների միջով, իսկ երբեմն գազանների նման ոտիներ դրծելով խորին խրամատների վրայով, առաջ էին խաղում։ Վերևից թուրքերի հրացանները որոտում էին. բայց դեռ այնքան տարածութիւն կար, որ գնտակները չէին հասնում։ Հայերը չէին պատասխանում, երբեմն միայն արձակում էին իրանց հրացանները օդի մէջ։

Արևը ծագեց, բայց ճառագայթներ դեռ չէին երևում. թանձր մառախուղը պատել էր հորիզոնը. սար, դաշտ, հովիտ կորած էին մթին մառայի մէջ։

—«Գայլը ամպ օր կուզէ, գողը մութ գիշեր»... մտածեց պարսից թագաւորի «բաթման զլիճը»։—Այդ մառախուղից կարելի է օգուտ քաղել....

Թաւ յօնքերի տակ թագնված խոշոր աչքերը առիւծի նման դարձրեց նա դէպի իր շուրջը։ Մառախուղը հետզհետէ թանձրանում էր, և կարծես, ձիւնի պէս սպիտակ, փխրուն լեռներ կուտակվում էին մինը միւսի վրա։ Եղանակի այդպիսի փոփոխութիւնը Հայաստանում յատուկ է Սիւնեաց աշխարհին միայն. յանկարծ ամենապարզ օրը ընդունում է մառախլապատ մթնոլորդ։

Եղանակի փոփոխութեան համեմատ Բայինդուր իշխանը փոխեց և իր գործողութեան ծրա-